## ԽՄԲԱԳՐՈՒՈՒՄ Է

ԵՒ ՊԵՏԵՐԲՈՒՐԳԻ ՑԵՆԶՈՒՐԱՅԻՑ ՄԱՍ-ՄԱՍ ՍՏԱՑՈՒԵԼՈՎ ՇՈՒՏՈՎ ՏՊԱԳՐՈՒԹԵԱՆ ԿԸՅԱՆՁՆՈՒԻ




ԱՆՈՒՆԸ ԿՐՈՂ ՆՈՐ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆԸ

# ԼԻԱԿԱՏԱՐ ՀԱՒԱՔԱԾՈՒ

## ԱՇՂԻ-ՋԻՒԱՆՈՒ ԻՆՔՆՈՒՐՈՅՆ ԵՒ ՓՈԽԱԴՐԱԾ ԵՐԿԱՍԻՐՈՒԹԻՒՆՆԵՐԻ

(Հեղինակի պօրտրետով, ֆաքսիմիլէով և կենսագրութիւնով):

«ՋԻՒԱՆՈՒ ՔՆԱՐԸ» բաղկացած է 10 հատորից, որոնք պարբերաբար լոյս կըտեսնեն այս տարուայ ընթացքում:

«ՋԻՒԱՆՈՒ ՔՆԱՐՈՒՄ» նիւթերն ըստ բովանդակութեան խմբագրւում են զանազան ընդհանուր խորագրերի տակ—այսպէս՝

### Ա. ԲԱԺԱՆՄՈՒՆՔ—ՈՏԱՆԱՒՈՐՆԵՐ.

Հատորներ՝

I. ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑ ԿԵԱՆՔԸ. Մեր ներկան—հասարակաց դրութիւնը. Ժամանակի պահանջը. շրջապատող տարրը՝ ամբոխը. գանգատ բախտէն—Զախորդ հանգամանքներ: Մեր վէրքերը—Ժողովրդի սահղծած տգեղ տիպերը՝ ցեցեր. ծաղը, յանդիմանանք, նկատողութիւն, մորակում, հեգնութիւն, զայրոյթ:—Արդար բողոք. հիասթափում (փոխաբերական):

II. ԱԶԳԻ ԴՐՈՒԹԻՒՆԸ. Նրա անցեալը, ներկան և ապագան.—Հայրենիքի թշուառ վիճակը—վիշտ ու ցաւ, կորուստ ու տանջանք—լաւ ու վատ օրեր: Անհանգչելի յոյս (փոխաբերական):

III. ԱՇԽԱՐՀԻ ԲԱՆԸ. Տխուր փաստեր—վիշտ ու զրկանք:—Համաշխարհային թախիծ—ցաւ ու դարդ—ծերութիւն, աղքատութիւն. պանդխտի սև օրը:

IV. ԱՇՈՒՂԻ ԽՐԱՏԸ. Բարոյական քարոզ, խրախոյս, յորդոր: Յոյս, բաղձանք—կոչ:—Հաւատ յաջողութեան:—Եզրակացութիւն:

V. ԱԶՆԻՒ ՍԷՐԸ. Սէր իսկական և անկեղծ—աշըղը և սիրուհին: Խրատ հայ աղջկան:

VI. ՋԻՒԱՆԻՆ ՄԵՆԱԿ. Մեր երգիչը և իւր ջութակը—Նրա աշխարհահայեցողութիւնը և դաւանանքը.—հեղինակը իւր հոգւոյ աշխարհում—Նրա անձնականը—հոգս ու նեղութիւն—գանգատ—իրաւացի տրտունջ:

VII. ՍՐՏԱԲՈՒՂԽ ԽՆԴԻՐ ԵՒ ՆՈՒԷՐ. Աղօթք, մաղթանք:—Ուղերձ, ձօն, ներբող:—Քաջալերական գովեստ:—Սփոփանք:—Ողբ, դամբանական, տապանագիր:

VIII. ԵՐԳԵՓՈՒՆՋ. Երգ ու տաղ, խաղ ու պար, մանի, բայաթի:—Քէֆ—ուրախութիւն, խնջոյք, հարսանիք, գինի, կեր ու խում, վարդ ու ծաղիկ: Բնութիւնը:

IX. ԱՇԸՂԻ ԴԱՖՏԱՐԸ. Պօէմա, դասիթան, ընդդիմախօսական:—Բարք ու վարք, պատմական, նկարագրական, նշանաւոր դիպուածք:—Ժամանակագրութիւն:
Յաւելուած. «Հայի հոգւով, թիւրքի խօսքով» (ոտանաւորներ պարսկերէն և տաճկերէն):

---

### Բ. ԲԱԺԱՆՄՈՒՆՔ—ԱՐՁԱԿ ԳՐՈՒԱԾՆԵՐ.

(ՊԱՏԿԵՐԱԶԱՐԴ).

X. ՀԱՅ ԺՈՂՈՎՐԴԻ՝ ԱՇԸՂԻ ԲԵՐԱՆԻՑ ԼՍԱԾ ՈՒ ՍԻՐԱԾ ՀԷՔԻԱԹՆԵՐԸ. (փոխադրութիւն տաճկերէն բնագրից, հանդերձ երգերով). 1) Աշըղ-Ղարիբի հէքիաթը, 2) Շահ Իսմայէլի հէքիաթը, 3) Մելիք Շահի հէքիաթը, 4) Քեարամի և Ասլիի հէքիաթը, 5) Քեօր-օղլու—աւազակ-բանաստեղծ:
Յաւելուած. «Աշուղական արուեստը» էսքիս Գ. Լ.-ի:

Այս բոլորը հաւանականօրէն տեղ կըբռնէ աւելի քան 1500 էջէ in 8⁰ (octavo).

Ծանօթ. Գրքի ինչպէս թղթի ու տպագրութեան, այնպէս էլ սրբագրութեան (հեղինակի հսկողութեամբ) վրայ առանձին հոգ պիտի տարուի, որ «Ջիւանու Քնարը» լոյս տեսնի այն շքեղութեամբ, ինչպէս մայրաքաղաքի գեղարուեստական հրատարակութիւնները:

## ՎԱՂՈՐՕՔ ԲԱՑՈՒԱԾ Է ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ

ԵՒ ԱՄԲՈՂՋԱԳԻՆ ՆՇԱՆԱԿՈՒԱԾ Է 3 ՌՈՒԲԼԻ (10 ՓՐ.):

Ա. Հատորի լոյս գալուն պէս ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆԸ ԿԸՓԱԿՈՒԻ և գրքի ԳԻՆԸ ԿԱՒԵԼԱՆԱՅ:

Ստորագրել ցանկացողներին խնդրւում է դիմել՝

ԹԻՖԼԻՍ «Կենդրոնական» և «Կովկասեան» գրավաճառանոցները.
ՄՈՍԿՈՒԱ. Ք. Բարխուդարեանի տպարանը М. Златоустовскій пер., д. Гиршъ.

ԱՐՏԱՍԱՀՄԱՆԵԱՆ ՀԱՅԱ-ՔԱՂԱՔՆԵՐՈՒՄ ԳՈՐԾԱԿԱԼՆԵՐ ԿԱՆ:

Дозволено Цензурою. С.-Петербургъ, 9 Декабря 1898 г.          Типогр. Х. Бархударянъ, М. Златоустовскій пер., д. Гиршъ.

